ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Գ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅՕԲԵԼԵԱՆԸ.— ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՑ. ԳՈՐԾԸ։

Ամսոյս 6-ին տօնուեց Գրիգոր Արծրունու հրապարակախօսական գործունէութեան 25-ամեակը, որի համար պատրաստութիւններ տեսնուում էին սկսած այս տարուայ յունուար ամսից։ Տօնը կատարուել է ոչ միայն յաջող, այլ և դրականապէս փառահեղ կերպով։ Եւ ես կարծում եմ, որ մեր գրական և հրապարակախօսական գործիչներից և ոչ մէկի յոբելեանը չի արժանացել այն ուշադրութեանը, որպիսիին արժանացաւ Արծրունու յոբելեանը։

Տօնախմբական պերիոդը աղմկալի էր մի ամսաչափ։ Ստիպուած լինելով մի որ և իցէ դիրք բռնել դէպի կատարուելիք տօնը, հասարակութեան և մամուլի բոլոր խումբերի մէջ կատարուեց մի տեսակ պրօցես. հին և նոր հաշիւները կրկին հրապարակ եկան։

Հասարակութիւնը հաւասարապէս չը վերաբերուեց դէպի Արծրունու տօնը. կային տօնողներ, կային և չը տօնողներ։ Տօնողների ամենաինտելիգենտ մասը ուզեց իւր մասնակցութիւնով յայտնել մի բան՝ որ «Մշակ»-ը հայոց մամուլի մէջ առաջ բերաւ մի շարժում, որը ունեցաւ շատ բարերար հետևանքներ յառաջադիմական ուղղութեամբ։

Հիմնական գաղափարը տօնողների այդ էր. դորանից դուրս նոյն իսկ տօնին մասնակցողները կարող էին իրար հետ վիճել և իրար հետ չը համաձայնել։

Եւ այն բոլորը, ինչ արտայայտուեց ամսիս 6-ին, այդ բոլորը, ասում եմ ես, կատարուեց գլխաւորապէս ի փչատակ «Մշակ»-ի սկզբնական տարիների փայլուն պերիոդի, որը բաւականաչափ զօրեղ էր, որ մի հանդիսաւոր օրում, նաև տարիներ յետոյ, իւր բոլոր ոյժով երևան գար։

«Մուրճ»-ը, որ 1889-ի 1 №-ում արդէն գնահատել էր Գ. Արծրունուն, այդ օրը ուղարկեց վերջինիս իւր շնորհաւորութիւնը, որի պատճէնը սա է.

«Մուրճ» ամսագրի խմբագրութիւնը, միանալով բազմաթիւ հասարակութիւններից, հիմնարկութիւններից և անձերից արտայայտած շնորհաւորութիւններին, վկայում է Ձեզ, յարգելի յօբելեար, իւր խորին յարգանքը այն բոլոր լուսաւոր մտքերի համար, որ Դուք Ձեր 25-ամեայ հրապարակախօսական գործունէութեան ընթացքում արտայայտել և մտցրել էք հասարակութեան գիտակցութեան մէջ։

«Մուրճի» խմբագրութիւնը հաճութեամբ ընդունում է, որ Դուք հայոց մտաւոր շարժման պատմութեան մէջ ունիք գրաւած Ձեր որոշ և պատուաւոր տեղը։ «Մուրճ»-ի խմբագրութիւնը ուրախ է, որ իւր գործունէութեան ասպարէզը յայտնի չափով հարթած է տեսնում Ձեր հրապարակախօսական ջանքերի շնորհիւ. դորա համար է ահա, որ նա պարտք է համարում այսօրուայ օրս միացնել իւր ձայնը շատ ուրիշների հետ և ողջունել Ձեր յօբելեանը»։

Նոր չէ «Մուրճ»-ը ընդունել «Մշակ»-ի պատմական գերը մեր մտաւոր շարժման գործի մէջ. և արտայայտել այդ մի այնպիսի բոպէում, երբ տեսնում են այդ շարժման շրջանի գլխաւոր գործիչին—«Մուրճ»-ը իւր համար պարտաւորութիւն համարեց։

Ես չեմ կարծում թէ կորստաբեր հոսանքները մեր կեանքում իսպառ ջնջուած լինին. ես կարծում եմ, ընդհակառակը, որ այդ հոսանքները գոյութիւն ունին և պատրաստ են մեր կեանքը ոստայններով փաթաթելու և խեղդելու, եթէ նրանց զօրեղ ընդդիմադրութիւն չ'անի։ Ամենազօրեղ ընդդիմադրութիւնը կը լինի այն, որ յառաջադէմ կուսակցութիւնը չանայ մշտ աւելի ու աւելի մեծ քայլեր անել դէպի առաջ, ապացուցել, որ գրականութիւնը միմիայն այդ կուսակցութեան գոգում կարող է իւր բարձր իդէալներին հասնել և բեղմնաւորուել։ Իսկ հոսանքները վերստին վերադառնալու և ձեռք բերածը կորցնելու վտանգի դէմ կռուելու գործի համար՝ Գրիգոր Արծրունին նաև այժմ մնում է մի կարևոր ֆակտոր, չը նայած որ ձեռք բերածը ինքն ըստ ինքեան կը կորչի, եթէ միայն յառաջադէմ կուսակցութիւնը չ'ուզենայ անել մի աւելի հեռու քայլ դէպի առաջ, քան այն ինչ որոշում է մեր լրագրութեան մտրիկ անցեալով և ներկայով։

Մեր ժողովրդական լուսաւորութեան գործը շատ յետամնաց դրութեան մէջ է։ Փոքր մանուկների կրթութիւնը բոլորովին անխնամ է թողած։ Փոքր ինչ հասակ առած երեխաների համար կան ծխական դպրոցներ, բայց դաւառներ կան, ուր տասնեակ և հարիւրաւոր գիւղեր առանց ուսումնարանի են։ Հասակ առածների համար կատարուած է որքան կարելի է քիչ։ Հասակաւորները կրթւում են պարբերական հրատարակութիւններով, որոնք դեռ ևս ամեն մարդու ձեռքում չեն գտնւում. ժողովուր-

դական գրքերով, որոնց հրատարակութեան միայն առաջին փորձերն են անում ներկայումս։ Գրադարանները և ընթերցարանները չեն կարող մի ուրիշ նոր բան տալ ժողովրդին, քան ինչ տալիս են գրականութիւնը և պարբերական հրատարակութիւնները։ Գրադարանները և ընթերցարանները ժողովրդին միմիայն մատչելի են դարձնում գրքերի և թերթերի ընթերցումը, բայց եղածի վերայ բան չեն աւելացնում, թէև նոքա հէնց իրանց այդ պաշտօնով մեծ ծառայութիւն են անում ժողովրդին։ Աւելորդ է աւելացնել, որ նաև գրադարանները ու ընթերցարանները դեռ ևս միայն մի քանի տեղերում կան հաստատուած. իսկ Թիֆլիսի մասին խօսելն էլ, որ լատկապէս հայ ընթերցանութեան համար գրադարաններ հիմնելու միտքը միայն նոր-նոր սկսում է իրականանալ։ „Մուրճ"-ի ընթերցողներին արդէն լալտնի է, որ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը արդէն սկսել է մի գրադարան հիմնել, որը պէտք է մատչելի լինի նաև համեստ գրպանի տէր անձերին։ Բայց մինչ այս մինչ այն, մի խումբ երիտասարդների ջանքերով արդէն այժմ հիմնուել է Թիֆլիսում, Միքայէլեան կամուրջի վերայ, այսպէս կոչուած „էժանագին գրադարան", որի նպատակն է շատ փոքր գնով՝ գլխաւորապէս չ'ունևոր դասակարգին մատչելի անել նաև հայոց գրքերի և թերթերի ընթերցումը։ Հետաքրքրական հանգամանք է, որ „էժանագին գրադարան"-ի գաղափարը վերցրած է Թիֆլիսում գոյութիւն ունեցող ռուս օրիորդ Օլգա Կալդանովալի „էժանագին գրադարան-ից" (Дешевая библіотека), որի նմանները Ռուսիայի ուրիշ քաղաքներում ևս կան և որի մի մասն էր կազմում, մի քանի ժամանակ, այժմեան հայոց „էժանագին գրադարանը"։ Նման մի հիմնարկութիւն հիմնուեց Նորերումս նաև մի ուրիշ անձի՝ օրիորդ Իշխանուհի Արղութեանի կողմից և պէտք է լուսալ, որ էժանագին գրադարանների գուռը այժմ բացած է և թէ Թիֆլիսում և թէ միւս քաղաքներում ու գիւղերում այսուհետև նման էժանագին գրադարաններ կը հիմնուին։

Բայց, որպէս լիշեցի վերև, գրադարաններով և ընթերցարաններով միմիայն տարածւում է տպագրութեան մէջ եղածը, այնպէս որ տպագրական գործը մնում է դեռ աւելի կարևոր խնդիր։ Եւ ես ասում եմ, որ դպրոցից դուրս հասարակութեան կրթութեան համար դեռ ես գրեթէ ամեն բան մնում է անելու, որովհետև եղածը դեռ շատ և շատ քիչ է։ Եւ ոչ միայն պէտք է աւելի մեծ եռանդով շարունակել ժողովրդական գրքեր հրատարակելու գործը, այլ և ժողովրդին կրթելու համար գործադրուող միջոցների վերայ պէտք է աւելացնել նորերը, մեզնում դեռ ևս չը գործադրուած միջոցները։

Մի գովելի նախաձեռնութիւն այդ կողմից պէտք է համարել Ախալցխայի երիտասարդութեան ձեռնարկութիւնը՝ ժողովրդական—հրապարակախօսական դասախօսութիւնները, որ, ինչպէս երևում է, լաջողութիւն է գտնում այնտեղ, չնորհիւ այն եռանդի, որ հրապարակախօսների խումբը ծառայեցնում է իւր սկսած և ամեն համակրանքներին արժանի գործին։

Այդ էլ, պէտք է ասած, մէկն է այն օգտակար նորութիւններից, որ խոստանում են լաւ ապագայ և որը, Ռուսիայի միջոցով, մենք փոխ ենք առնում Եւրոպայից։ Միայն թէ Ռուսիայում եկել են այն եզրակացութեան, որ ժողովրդին, մանաւանդ անգրագէտ ժողովրդին, աւելի հասկանալի լինելու համար, աւելի օգտակար են ժողովրդական ընթերցումներ՝ սուերի տեսարաններով (публичныя народныя чтенія съ туманными картинами)։

Այդպիսի ժողովրդական ընթերցումների մի փորձ արաւեց Թիֆլիսում, ներկայ մայիս ամսի 6-ին, նախաձեռնութեամբ մի քանի անհատների, ռուսների համար, առ այժմ կլասիկական գիմնազի սենեակներից մէկում։ Փորձը պէտք է կրկնուէր մի երկու անգամ ևս, իսկ ներկայ տարաւ սեպտեմբերից պէտք է գործը կազմակերպւի և կանոնաւոր ընթացք ստանայ։

Անկասկած է, որ այստեղ մենք գործ ունինք մի սկզբնաւորութեան հետ, որ պէտք է օրինակ ծառայէ նաև մնց համար, որպէս Ռուսիայի միւս քաղաքները այդ կողմից օրինակ են ծառայել Թիֆլիսի ռուս հասարակութեան համար։ Այդ առիթով պէտք է ասել, որ հրապարակական—ժողովրդական ընթերցումները սուերի-տեսարաններով մուտք գործեցին Ռուսիայում 70-ական թւականների սկզբում միայն, իսկ 80-ական թւականների սկզբին նոքա արդէն մեծ ծաւալ էին ստացել։ Շատ նահանգական և մի քանի գաւառական քաղաքներում, ամենահեռաւոր անկիւններում, վերջապէս ամեն տեղ, ուր կար կրթւած անձերի մի խումբ, որոնց կեանքը ամբողջապէս չէր սպառւած անձնական շահերով և թղթախաղով,—ամեն տեղ աշխատեցին այդպիսի ընթերցումներ սարքել։

Եւ ամեն տեղ, ուր կազմւում էին այդպիսի „կիրակնօրեայ“ ընթերցումներ, նոքա յաջողութիւն էին ունենում և դէպի իրանց էին գրաւում ընդհանուրի համակրութիւնը և մասնակցութիւնը բանւորների, ծառաների, մանրավաճառների, գործակատարների և արհեստաւորների։ Այդ հասարակութեան համար կիրակնօրեայ ընթերցումները դառնում էին սիրւած զւարճութիւններից մէկը։ Իսկ եթէ շատ տեղ գործը կաղում է, նորանից է, որ գործը սարքողները միջոցներից զուրկ են։ Հաստատ հիմք դրւած է գործին միայն Պետերբուրգում, Մոսկւայում և մի քանի նահանգական քաղաքներում, ուր նոցա ղեկավարող մասնաժողովները ունին որոշ միջոցներ նոցա պահպանելու և աւելի զարգացնելու համար։ Հեռաւոր քաղաքներում գործի գոյութիւնը պարտական է եռանդոտ մարդկանց խմբերին, որոնք նպատակին հասնելու համար հանդիպում են ամեն տեսակ արգելքների։ Դլխաւոր պակասութիւնը—միջոցների սակաւութիւնն է, որպէս զի կարողանան յարմար ու մշտական բնակարան վարձել, պատկերներ ձեռք բերել և նոցա դնելու յարմարութիւնները ստեղծել։ Այդ պատճառով գործը լաւ ընթացք է ստացել միայն այն տեղերում, ուր տեղական քաղաքային կամ դիմաստային (նահանգական) ինքնավարութիւնները իրանց վերայ են

առնում գործի սարքելը կամ ամբողջապէս, որպէս Վլադիվոստոկում, կամ օժանդակութիւններ տալով 300—500—750 ռուբլու, որպէս Կիեւում, Նիկոլաեւում, Օդեսսայում և Հաշտարխանում, անդամ երբ միանւագ խոշոր դումարներ են յատկացնում, ինչպէս Օդեսսայում (20.000 ռ.), Խարսլաւում (300 ռ.)։

Ի դէպ է աւելացնել, որ ժողովրդական ընթերցումների համար նիւթերի ընտրութիւնը սահմանափակւած է կանոնադրութիւնով 24 ին դեկտ. 1876 թ., որը որոշում է ընթերցանելի չարադրութիւնները։ Թոյլատրւածների մէջ կան կրօնական ընթերցումներ, պատմութիւններ սրբազան պատմութիւնից, յօդւածներ բնական պատմութիւնից և աշխարհագրութիւնից, որպէս նաև պատմութիւններ, որոնք ներկայացնում են յարմարեցրած փոփոխութիւններ ռուսաց լաւագոյն գրողների մի քանի չարադրութիւնների։

Պէտք է յուսալ, որ հայ ինտելիգենցիան Թիֆլիսում և գաւառներում կ'աշխատէ օգտւել ժողովրդական լուսաւորութեան այդ լաւ միջոցից, յարմարացնելով ընթերցանելի նիւթերի ընտրութիւնը տեղական նահանգներին և ժողովրդի պահանջներին։ Միայն թէ այժմեանից կարող եմ խորհուրդ տալ՝ ժողովրդին ծանօթացրէք որքան կարելի է շատ գիտութիւնների տարերքների հետ։

Պէտք է արդեօք աւելացնել, որ քաղաքային դումարները, զանազան բարեգործական և այլ ընկերութիւնները պէտք է ձեռք կարկառեն սկսողներին, քանի որ ստւերային տեսարանները ինչ և իցէ փող են նստում և ամեն մի ընթերցում 30 ռուբլու չափ ծախք է պատճառում։

ԼՈՒՍԻՆԻ